



COVID-19-ի դեմ Պատվաստում Ի՞նչ Պետք Է Իմանան Ծնողները



5-11 տարեկան
1/3 ԴԵՂԱԶԱՓ



12 տարեկան և ավելի
բարձր տարիքի
ԼՐԻՎ ԴԵՂԱԶԱՓ



ԿԱՐՈՂ Ե ԻՄ ԵՐԵՒԱՆ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ COVID-19-Ի ԴԵՄ

5 տարեկան և ավելի բարձր տարիքի բոլոր երեխաները կարող են պատվաստվել COVID-19-ի դեմ **Pfizer** պատվաստանյութով:

- 12 տարեկան կամ ավելի բարձր տարիքի պատանիները ստանում են միևնույն Pfizer պատվաստանյութը, ինչ մեծահասակները:
- 5-11 տարեկան երեխաները ստանում են ավելի քիչ չափաբաժնով տարբերակը: Այն ներարկվում է երեխաների համար ստեղծված փոքր ասեղով:
- Պատվաստանյութի երկու տարբերակներն էլ տրվում են **2 դեղաչափով՝ 21 օր տարբերությամբ**: Այն կարող է տրվել ուրիշ պատվաստանյութերի հետ միաժամանակ:
- Պատվաստանյութերն **անվճար են** բոլորի համար: Ձեզ անհրաժեշտ չէ ապահովագրություն, և ձեզ չեն հարցնի ձեր ներգաղթի կարգավիճակի մասին:

ԱՐԴՅՈ՞Ք ԵՄ ՊԵՏՔ Ե ԻՄ ԵՐԵՒԱՆՅԻՆ ՊԱՏՎԱՍՏՎԵՄ COVID-19-Ի ԴԵՄ

- Ձեր երեխային (երեխաներին) պատվաստելը նրանց COVID-19-ով վարակվելուց **պաշտպանելու լավագույն միջոցն է**: Չնայած, որ COVID-19-ը երեխաների մոտ ավելի մեղմ է ընթանում, որոշ երեխաներ վարակվելուց հետո լրջորեն հիվանդանում են կամ ունենում են երկարատև առողջական խնդիրներ:
- Երեխաները կարող են վիրուսը փոխանցել ուրիշներին: Ձեր երեխային պատվաստելը կարող է օգնել պաշտպանել ձեր **ընտանիքի անդամներին և ընկերներին**: Սա ներառում է այն երեխաներին, որոնք շատ փոքր են պատվաստվելու համար և նրանց, որոնք գտնվում են COVID-19-ով լրջորեն հիվանդանալու ավելի բարձր վտանգի ներքո:
- Ձեր երեխային պատվաստելը կարող է օգնել նրան մնալ դպրոցում և ավելի ապահով դարձնել նրա համար խմբակային զբաղմունքներին մասնակցելը: Եթե ձեր երեխան լիովին պատվաստված է, նրանից չի պահանջվի COVID-19-ի թեստ հանձնել սպորտով զբաղվելու համար: Ինչպես նաև նրանից չի պահանջվի կարանտին պահպանել, եթե շփվել է COVID-19-ով հիվանդ որևէ անձի հետ:

ՈՐՏԵ՞Ղ ԿԱՐՈՂ ԵՄ ՊԱՏՎԱՍՏԵԼ ԻՄ ԵՐԵՒԱՆՅԻՆ

COVID-ի դեմ պատվաստանյութերը հասանելի են բազմաթիվ բուժհաստատություններում, կլինիկաներում, դպրոցներում և դեղատներում: Այցելեք **VaccinateLACounty.com**՝ ձեզ մոտիկ պատվաստման վայր գտնելու համար: Հավաստիացեք, որ այդ վայրում առկա է ձեր երեխայի տարիքին հապատասխան Pfizer պատվաստանյութը, և հարցրեք, թե ինչպես պետք է տրամադրվի **ծնողի համաձայնությունը**:

Չանգահարեք Հանրային Առողջության Վարչության Պատվաստման Չանգերի Կենտրոն **833-540-0473** հեռախոսահամարով՝ առավոտյան 8-ից երեկոյան 8:30-ը, եթե ձեզ անհրաժեշտ է օգնություն պատվաստանյութ գտնելու, փոխադրման կամ տնային պատվաստում պատվիրելու հարցում: Տեղեկատվությունը հասանելի է բազմաթիվ լեզուներով 24/7՝ 2-1-1 հեռախոսահամարով:





COVID-19-ի դեմ Պատվաստում Ի՞նչ Պետք Է Իմանան Ծնողները

ՈՐՈ՛ՆՔ ԵՆ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԿՈՂՄՆԱԿԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Հաճախակի հանդիպող կողմնակի ազդեցությունները ներառում են ցավ, այտուց կամ կարմրություն ձեռքի այն հատվածում, որտեղ կատարվել է ներարկումը, հոգնածության զգացողություն, գլխացավ, մկանային ցավ, սրտխառնոց, ջերմություն կամ դող: Այս կողմնակի ազդեցությունները ցույց են տալիս, որ ձեր երեխայի իմունային համակարգը **ստեղծում է պաշտպանություն**:
- Կողմնակի ազդեցությունները կարող են ազդել ձեր երեխայի ամօրյա գործողությունների վրա, սակայն դրանք պետք է անհետանան մի քանի օրվա ընթացքում:



ԱՐԴՅՈ՛Ք COVID-19-Ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐՆ ԱՆՎՏԱՆԳ ԵՆ ԵՐԵՄԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Այո՛: COVID-19-ի դեմ պատվաստանյութերն անցել են ԱՄՆ պատմության մեջ **ամենաուժեղ անվտանգության վերահսկողությունը**: COVID-19-ի դեմ Pfizer պատվաստանյութը մանրակրկտորեն փորձարկվել է, և այն անվտանգ և արդյունավետ է մեծահասկաների և երեխաների համար: 12-ից 17 տարեկան ավելի քան 11 միլիոն պատանիներ ապահով կերպով պատվաստվել են այդ պատվաստանյութով:
- Լուրջ առողջական խնդիրները **հազվադեպ են**:
 - Pfizer պատվաստանյութով պատվաստվելուց հետո քիչ թվով մարդկանց մոտ առաջացել է սրտամկանի կամ սրտապարկի բորբոքում (միոկարդիտ և պերիկարդիտ): Սա ավելի հաճախ հանդիպում է արական սեռի դեռահասների և երիտասարդների շրջանում: Դեպքերի մեծ մասը ընթանում է մեղմ, և հիվանդները լավ են արձագանքում բուժմանը և հանգստին:
 - Լուրջ ալերգիկ հակազդեցություն (անաֆիլաքսիա) կարող է առաջանալ ցանկացած պատվաստանյութից հետո, սակայն դա հազվադեպ է տեղի ունենում: COVID-19-ի դեմ պատվաստվելուց հետո բոլորը գտնվում են հսկողության ներքո: Եթե առաջանում է հակազդեցություն, այն անմիջապես բուժվում է:
- Ձեր երեխան **չի կարող վարակվել COVID-19-ով** COVID-19-ի դեմ որևէ պատվաստանյութից:
- Չկա որևէ ապացույց, որ COVID-19-ի դեմ պատվաստանյութերը ազդում են զարգացման կամ պտղաբերության վրա:



ՆԱԽՔԱՆ ՁԵՐ ԵՐԵՄԱՅԻ ՊԱՏՎԱՍՏՎԵԼԸ

- **Խոսեք ձեր երեխայի հետ** պատվաստման, հնարավոր կողմնակի ազդեցությունների մասին և թե ինչ ակնկալել:
- Նախքան պատվաստելը երեխային մի՛ տվեք ցավազրկողներ՝ փորձելով կանխել կողմնակի ազդեցությունները:
- Պատվաստման վայրում տեղեկացրեք, եթե ձեր երեխան ունի ալերգիաներ:



Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **COVID-19-ի դեմ Պատվաստման ՋՏՂ-ների Ծնողների Համար՝ [VaccinateLACounty.com](https://www.vaccinateLACounty.com)** կայքէջում:

